



եպիսկոպոսներու անունները և խօսքը ուղղելով պատգամաւորներուն երկցս հարցուց թէ արդեօք կամ իրենց մէջ որեւէ մէկը որ յատկապէս յանձնարարուած ըլլար ժողովին ներկայացնելու բացակայ եպիսկոպոսներէն որ եւէ մէկը, իբրև կաթողիկոսական թեմաւ ծու: Այս երկցս կրկնուած հարցումին երկցս ժխտական պատասխան տուեցաւ: Յետոյ, Վեհ. Նախագահը հրամայեց որ քուէատուփը նախագահութեան սեղանի առջև դրուի և փակուի, և քուէթուղթերը բաժնուին պատգամաւորներուն, ինչ որ կատարուեցաւ անմիջապէս: Այնուհետև հրաւիրեց պատգամաւորները որ իրենց յանձնուած քուէաթուղթին վրայ գրեն միայն մէկ անուն որպէսզի գաղտնի քուէարկութեամբ, առաւելագոյն քուէ ստացողներէն, կազմուի ընտրելաց երկանուն ցանկը և այդ ցանկին վրայ կատարուի վերջնական ընտրութիւնը: Քուէաթուղթերը լեցուելէ վերջ ժողովի Գարտուղար Տ. Գրիգոր Մ. Վրդ. կարպետեան կարգաւ կարգաց պատգամաւորներու անունները որոնցմէ իւրաքանչիւրը իր կարգին յառաջացաւ դէպի քուէատուփը և իր քուէաթուղթը աւնոր մէջ ձգեց, կափարչիչի բացուած քէն: Քուէարկութիւնը աւարտելէ յետոյ Գիբ. Արաւրդապետը յայտարարեց որ պատգամաւորներէն երկուքը՝ Տիար Արշակ Գալմէքեարեան Հալէպէն և Տիար Սամուէլ Ծակպարոնեան Վրաստանէն բացակայ էին հիւանդութեան պատճառաւ և հետևաբար ընտրութեան մասնակցող պատգամաւորներու թիւն էր 111:

Այս յայտարարութենէն յետոյ Վեհ. Նախագահի հրամանով բացուեցաւ քուէատուփը և Արարողապետ Սրբազանը բարձրաձայն համրեց քուէները և գտաւ 111 հատ: Քուէախոյզներ նշանակուեցան Տիար Բարգէն Օլուզլեան և Տիար Սարգիս Քիւրքեան և անմիջապէս կատարուեցաւ քուէաթուղթերու անուններու ընթերցումը և արձանագրութիւնը: Արարողապետ Սրբազանը քուէարկութեան արդիւնքը հաղորդեց Վեհ. Նախագահին որ իր կարգին յայտարարեց ժողովին թէ «Ամենպատիւ Տեղակալ Տ. Գեորգ Արքեպս. Ձեօրէքեան ստացած էր 110 ձայն իսկ Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը մէկ ձայն»: Այն յայտարարութենէ յետոյ ժողովը յարնկայս ձեռամբարձ քուէարկութեամբ և միանալութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս հռչակեց Տ. Տ. Գէորգ Արքեպիսկոպոս Չէօրէքեան:


Վեհ. Նախագահը, դարձաւ Նորընտիր Կաթողիկոսին և ողջագուրուելով ամենաջերմ մաղթանքներով շնորհաւորեց իր և Կիլիկիոյ Կաթ. Թեմի Հայ ժողովրդի կողմէ: Նոյնը ըրաւ Երուսաղէմի Պատրիարքը իր և յանուն Սրբոց Յակոբեանց Միաբանութեան և Պատրիարքական Թեմի ժողովրդեան: Մայր Տաճարի բոլոր զանգակները սկսան հնչել, վարպետուած սեղանները բացուեցան, ջահերը վառուեցան և եկեղեցականները իշման Սեղանի շուրջ խմբուած, սկսան երգել «Էջմիածին ի Հօրէ»: Նոյն ատեն Վեհափառին մատուցուեցան կաթողիկոսական գաւազանը և ձեռաց խաչը: Ամբողջ հրգեցողութեան ընթացքին բոլոր ներկաները անդիմադրելի յուզումով մը համակուած կ'արտասուէին:

Պատգամաւորները կորգաւ համբուրելով Նորին Վեհափառութեան Սուրբ Աջը իրենց շնորհաւորական խօսքերը մատուցին: Եկեղեցականները թափօր կազմելով յառաջացան դէպի Տաճարի աւագ մուտքը և «Ուրախ լիբ սուրբ եկեղեցի» շարականը երգելով զանգակատան ներքեւէն ուղղուեցան դէպի Վեհարան ուր Նորընտիր Վեհափառ Կաթողիկոսը, ջերմ զննատանքներով օրհնեց և արձակեց պատգամաւորները, և բոլոր միւս ներկաները: Ժողովէն վերջ, Նորընտիր Վեհափառ Կաթողիկոսի բարձր հաւանութեամբ որոշուեցաւ Անոնագրութեան և Օծման արարողութիւնը կատարել Յունիսի 24-ին, Կիրակի օր, Ձեռուտեան ժամը 11-ին:

**Ձ Ե Թ Ի Ս Ա Գ Ի Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ե Ի Օ Ծ Ո Ի Մ**

Յունիս 23-ին Շարքի օր երեկոյեան ժամը 5-ին Նորընտիր Վեհափառ Կաթողիկոսը, առաջնորդութեամբ բովանդակ կղերական դասուն Վեհաբանէն Մայր Տաճար իջաւ Նախագահելու Երեկոյեան Պաշտամունքին և Հսկումին: Առաջնորդող թափօրը սկսաւ Վեհարանի ներքին մուտքի առջևէն, ուր կաթողիկոսական ամպոնովանին կը







կուսազբ ձայնեց «Ողջոյն»ը եւ բեմի վրայ գտնուողները կարգաւ մօտեցան մի առ մի եւ խոնարհութիւն ընելով ողջոյնը առին Ն. Ս. Օծութեանէն, համարուելով Ս. Աջը եւ նահատարը, Ազա Ն. Ս. Օծութեանը դարձաւ զէպի Ս. Սեղան եւ կաթ. քօղ եւ թաղի դուխ շարունակեց Ս. Պատարազը՝ ցվերջ:

Յաւարտ Ս. Պատարազի, Եկեղեցականները իրենց թափօրը վերակազմեցին նոյն զգեստաւորութեամբ եւ նոյն կարգով եւ բեմի առջեւէն ուղղուեցան զէպի Ճանարի աւագ մուտքը: Հոն, զանգապտան տակ, Ն. Ս. Օծութեանը կանգ առաւ, եւ կատարուեցաւ Ս. Աւետարանի ընթերցումը ի լուր բակի մէջ հաւաքուած բազմութեան: Թափօրը յառաջացաւ զէպի Վեհարանի ծաղկեայ դահլիճը, ուր Ն. Ս. Օծութեանը օրհնեց եւ արձակեց ներկաները: Աւանդական կնքահայրութեան պաշտօնը տասնձեռն էրն Վեմ. Ծանիկ Չազրը, Պ. Հայկ Գաւուզեան, Պ. Թ. Իսայեվ, Պ. Մկրտիչ Մսրըլեան եւ Պ. Սարգիս Քրուքեան. անոնք ալ լուացման արարողութեան սպասարկեցին եւ մեկնեցան համբարներով Ն. Ս. Օծութեան Ս. Աջը եւ ընդունելով անոր բարձր գնահատանքն ու օրհնութիւնը:

Ստորեւ կը գննք այն պաշտօնական յայտարարութիւնները, հեռագիրները եւ գրութիւնները որոնք կապ ունին Նորին Ս. Օծութեան Ընտրութեան եւ Օծման հանդիսութեանց հետ եւ որոնք ներկայացուցեցան Ազգային-Եկեղեցական ժողովի՝ վերջին նիստին մէջ:

Ազգային-Եկեղեցական ժողովը իր Զ. նիստին մէջ տրուած որոշման մը համաձայն Յունիս 25-ին յետ միջօրէի ժամը 1.30-ին գումարեց իր է. նիստը նախագահութեամբ Նորին Ս. Օծութեան Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի եւ ատենապետութեամբ Պ. Աւետիս Իսահակեանի: Ժողովի ընթացքին կարգացուցեցաւ Կ. Պոլսոյ Հայոց պատգամաւորներէն Տեաքը Յրուանդ Ս. Ինճէեանի եւ Թորոս Աղատեանի ներկայացուցած հետեւեալ խնդրագրերը. «Նկատի ունենալով որ կամքէ անկախ պատճառներով Թորքիոյ Հայոց պատգամաւորութիւնը չկարողացաւ ժամանակին հասնիլ» նկատի ունենալով որ մեր պատգամաւորութեան միակամ ընտրիլին որպէս արժանաւորագոյն թեկնածու, մեր Հայաստան ժամանումէն առաջ ալ միեւնոյնն էր, կը խնդրենք Ազգ.-Եկեղեցական ժողովէն որ մեր 6 ձայներն ալ միացուին Վեհափառ Տ. Տ. Գէորգ Զ. Սրբազան Կաթողիկոսը ընտրող 110 ամբողջական ձայներուն եւ ըստ այնմ արձանագրուի ժողովի ատենագրութեանց մէջ: Ժողովը միաձայնութեամբ ընդունեց այս խնդրանքը: Նոյնպէս Հաշիպի պատգամաւոր Տիար Արշակ Գալէմբեքեան որ հիւանդութեան պատճառաւ բացակայած էր ընտրողական ժողովէն, խնդրեց որ իր քուէն ալ ընդունուի եւ աւելցուի ընդհանուր թիւին: Ժողովը միաձայնութեամբ ընդունեց այս խնդրանքն ալ, որով նորընտիր Հայրապետը ունեցաւ 117 քուէ:

Նորընտիր Վեհափառ Հայրապետի հրամանով Տ. Ներսէս Մ. Վրդ. Արարամեան կարգաց հետեւեալ հայերէն թարգմանութիւնը ռուսերէնով գրուած այն նամակին որ Սովետական Միութեան ժողովուրդեացի կից Հոգեւոր Պաշտամունքներու Խորհուրդի նախագահ Ի. Վ. Պոլեանսկի ուղղած էր Նորին Ս. Օծութեան «Ամենայն Հայոց Մայրաքաղաք Կաթողիկոս Գէորգ Զ.ին»: «Սովետական Սոցիալիստական Հանրապետութիւններէ Միութեան Կառավարութեան անուանից եւ իմ կողմից շնորհաւորում եմ Ձեզ Հայոց եկեղեցու Պետ ընտրուելու առթիւ:

«Հաւատում եմ, որ Ձեր իմաստուն ղեկավարութեամբ Հայոց եկեղեցին այնպիսի յաղողութեամբ, ինչպէս Հայրենական Պատերազմի ընթացքում, կը լուծէ եկեղեցւոյ առաջ դրուած պատասխանատու խնդիրները»

«Սովետական Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան Կառավարութիւնը յանձնարարել է ինձ յանձնել Ձեզ իրբեւ նուէր մէկ մարդատար ավտոմեքենայ՝ Զիս 101:

«Մեծ բուականութեամբ կատարում եմ նման հանելի յանձնարարութիւնը»  
24 Յունիս 1945, Երևան  
Ձեզ անկեղծ յարգող  
ՊՈՒՅԱՆՍԿԻ

Պրոֆ. Արարատ Ղարիպեան կարգաց հետեւել պատճէնը այն օրիակարացիա՞րին որ պիտի մատուցուէր Սովետական Միութեան հանճարեղ առաջնորդին Մեծն Մտայինին, Ազգային Եկեղեցական Ժողովի փակման առթիւ.

«Ժողովրդական Կոմիսարների Սովետի Նախագահ  
Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինին»

«Հայաստանեաց Եկեղեցու Համազգային Ժողովի պատգամաւորներս, աւարտելով մեր աշխատանքները, հաճուք ու պատիւն ունինք յայտնելու Ձեզ մեր սրտագին երախտագիտութիւնը: Սովետական Միութեան մեզ տուած դիրութիւններով մենք հնարաւորութիւն ունեցանք կատարելու համերաշխութեամբ և միաձայնութեամբ ընտրելու Ամենայն Հայոց Պատրիարք Կաթողիկոս Տէր Արքեպիսկոպոս Զէօրէքեանին:

«Հայրենասիրական գաղտնւո՞ւնքով և գիտակցութեամբ մեր անկեղծ ուրախութիւնն ձեռք յայտնում, տեսնելով մեր հայրենիքի կուլտուրական և անտեսական վեարկէքը, որ վեր է բոլոր ակնկալութիւններից: Չնայելով վերջին տարիների անառք պատերազմը, որ բնականաբար, հրիբի օյժերը պիտի լարէր պատերազմական պահանջներին գոհացում տալու համար, տեսնում ենք, որ Հայաստան ընթացել ու ընթանում է յարաճուն դարգացման ճանապարհով: Մենք տեսնում ենք Հայաստանում, արտագրական, գիտական, կուլտուրական, զեղարուեստական և այլ հաստատութիւններ ու կրթարհներ, մենք տեսնում ենք երբեմնի անապատ հողերն այժմ ծաղկած ու մշակուած ոռոգման մեծ աշխատութիւններով, և անհուն է մեր հրճուանքն ու հիացումը մեր ժողովրդական և պետական կեանքի վերելքը տեսնելով: Մենք խորապէս գիտակցում ենք, որ այս քույրը հնարաւոր է այն պատճառով, որ մեր հայրենիքն էլ մեծ բարեբախտութիւնն ունի Սովետական Մեծ Միութեան մէկ անցամբ լինելու, վայելելով Ձեր հայրական խնամքն ու բարեացակամ ուշադրութիւնը:

«Մենք մեծ յոյս ունենք, որ Սովետ. Միութեան պետական և քաղաքագիտական իմաստութիւնը կը գտնէ նաև միջոց ու ճանապարհ վերացնելու այն անարդարութիւնը որին հենթաբարեկեց մեր ժողովուրդը, առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում»

«Գորգացուեցան նաև պատճէնները հետեւել հեռագրներու որ ուղղուած էին Սովետ Միութեան Նախագահ Կալինինին և Ռուսաց Եկեղեցւոյ Պատրիարք՝ Ամենապատիւ Ալէքսէյին».

ՍՍՍՐ Գերագոյն Սովետի Նախագահութեան  
Նախագահ Միքայէլ Իվանովիչ Կալինինին

«Հայկական Համազգային-Եկեղեցական Ժողովը հաւաքուելով էջմիածնում և ստանալով բոլոր հնարաւորութիւնները իր աշխատանքի համար ու քաղաքի քուէարկութեամբ միաձայն Ամենայն Հայոց Մայրաքոյն Պատրիարք և Կաթողիկոս ընտրեց Արքեպիսկոպոս Զէօրէքեանին:

«Ժողովս իր երախտագիտութիւնն է յայտնում Սովետական Կառավարութեան ուշադրութեան և բարեացակամութեան համար»

Համազգային Եկեղեցական Ժողովի անունից  
(ԱՅՈՐ.) ԳԱՐՆԳԻՆ  
Տանն Կրկիկոյ Կաթողիկոս

Նորին Արքեպիսկոպոսն Ամենայն Ռուսիոյ Պատրիարք Ալէքսէյին.

«Համահայկական Եղգային-Եկեղեցական Ժողովը 1945 թուի Յուլիսի 22-ին էջմիածնի Նախաթոս Մայր Տաճարում գաղտնի քուէարկութեամբ միաձայն Կաթողիկոս Ամենայն Հայոց ընտրեց Արքեպիսկոպոս Գէորգ Զէօրէքեանին, որի մասին տեղեկացուած է Ձեզ»:

Համազգային Եկեղեցական Ժողովի Նախագահ  
(ԱՅՈՐ.) ԳԱՐՆԳԻՆ  
Տանն Կրկիկոյ Կաթողիկոս:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝  
ՍՍՌ ՄԻՈՒԹԵԱՆ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ԿՐՕՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ  
ԳՐԹԵՐԻ ԽՐՂՀՐԳԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՊՐՆ. Ի. Վ. ՊՈԼԵԱՆՍԿԻԻ ՃԱՌԸ  
ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Հայ Եկեղեցու մեծարգոյ գործիչներ.

Սովետական Սոցիալիստական Ռեպուբլիկաներու Միութեան Կառավարութեան անունից և նրա լիազօրութեամբ դիմում եմ Ձեզ, ողջունելով և ցանկանալով ձեր աշխատանքին յաջողութիւն:

Հայ Եկեղեցու օրբան Մայր Աթոռ Էջմիածնում, որ սբբութիւն է հանդիսանում բոլոր հաւատացեալ հայերի համար, Գուք հաւաքուել էք բարձրապատիւ հոգևապետներ, հոգևոր հովիւներ, և աշխարհականներ, ձեզմով ներկայացնելով ամբողջ Հայ Եկեղեցին, որ սրանից առաջ հայ ժողովրդի գոյութեան ամբողջ ընթացքում, այն ժողովրդի. որ անցեալում կրել է շատ ձախորդութիւններ, տառապանքներ և զրկանքներ, մշտապէս աշակցել է ժողովրդի ազգային ինքնուրոյնութեանը, դատարարակել է նրա ազգային գիտակցութեան զգացումները, նպաստել է նրա մշակոյթի զարգացմանը:

Հայ Եկեղեցու այդ դերը, ազգային միասնութիւն պահպանողի դերը, չի կարող աւարտուած համարել նաև ներկայումս, մանաւանդ հայ ժողովրդի ամբողջ աշխարհում ցրուած լինելու պայմաններում:

Ազատագրական մեծ պատերազմի օրերին Հայ Եկեղեցին անմասն չմնաց: Նա իր ժամանակաւոր ղեկավար Արքեպիսկոպոս Գէորգ Ձեօրէքեանի կողով, որ բեղմնաւոր քիչ ջանքեր չխնայեց Հայ Եկեղեցու զարգացման գործի մէջ, անմիջական մասնակցութիւն ցոյց տուեց ազատասէր ողջ մարդկութեան և համաշխարհային քաղաքակրթութեան մահացու թշնամի՝ հիտլէրեան Գերմանիայի դէմ մղուած պայքարում, այն Գերմանիայի, որ ներկայումս ամբողջովին լախնախուած է հերոսական Կարմիր բանակի և մեր Իսաակիցների բանակների կողմից:

Սակայն ուզումական յաղթանակը միայն զբաւական է հանդիսանում խաղաղութիւնը կազմակերպելու այնպիսի կիմունքներով, որոնք բացառելին նոր պատերազմի առաջացումը և մարդու ազատելին մշտական երկիր լի և վաղուան նկատմամբ անվստահութեան զգացումները:

Այդ խնդիրը լուծելու համար աշխատում են լաւագոյն մտածողները և ի հարկէ նրանց ջանքերը աննետանք ընն մնայ:

Այժմ ազատասէր բոլոր ազգերի առաջ ծառայել է նաև մի այլ ոչ պակաս պատասխանատու խնդիր՝ ակտիվ կերպով աշակցել ո՛չ միայն այդ սկզբունքների մշակմանը, այլև զլիաւորապէս բոլոր ուժերը ի գործ դնել այդ սկզբունքները գործնական կեանքում կիրառելու համար: Աշխարհի մութ յետադէմ ուժերը զէնքը ամենևին ցած չեն դրել և նրանց դէմ մեզ սպասում է դիմաւ յամառ պայքար:

Թոյլ տուէք իմ վստահութիւնը յայտնել, որ Հայ Եկեղեցին խաղաղ շինարարութեան բնագաւառում ևս վերմ մասնակցութիւն ցոյց կտայ, կըլ անելով այդ գործին մասնակցելու իր բոլոր անդամներին:

Ժողովը կուռուած է նաև լուծելու Հայ Եկեղեցու ներքին կառուցուածքի շատ կարևոր հարցեր և ընտրելու այդ եկեղեցու իմաստուն, փորձուած, արժանաւոր ղեկավար Գերագոյն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Ես հաստատ համոզուած եմ, որ Ձեր քննարկման ենթակայ այդ հարցերը միահամուռ և յաջող լուծում կը ստանան:

Ժողովի յարգոյ պատգամաւորներ, Դուք հաւաքուել էք ժողովի սովետական երկրում. այն երկրում, որ ընդմիջտ թօթափել է դաւանարանական, ցեղային, ազգային սահմանափակումների ու նշումների կապանքները. այն երկրում, որտեղ ազգարարուել և անսասան կենսազործուում է ժողովրդի լիակատար ազատութիւն, որտեղ գոյութիւն ունի առանց բացառութեան կրօնական բոլոր կազմակերպութիւնների իրաւահասարակութիւն: Եւ այդ անշուշտ կը նպաստի ժողովի բեղմնաւոր աշխատանքին:

Կառավարութեան լուծումը պահանջող պաշտամունքի հարցերի գծով Սովետական Միութեան կառավարութեան և կրօնական կազմակերպութիւնների միջև կապ սահմանելու համար ստեղծուել է ՍՍԻ Միութեան Ժողկոմսովետին կից կրօնական պաշտամունքի գործի Խորհուրդը:

Յորհրդի կիմական խնդիրն է հանդիսանում նպաստել նորմալ յարաբերութիւնների յետագայ զարգացմանը կրօնական միաւորումների և պետութեան միջև և ամէն օր հետեւել, որ ճշտիւ կենսազործուեն այդ միաւորումների գործունէութեան վերաբերող կառավարութեան Օրէնքներն ու Որոշումներն առանց որեւէ կերպ միջամտելու նրանց ներքին կեանքին:

Պէտք է ուղղակի ասել, որ Խորհրդի և Հայ Եկեղեցու ղեկավարութեան միջև այնպիսի յարաբերութիւններ են հաստատուել, որոնք նպաստել են Հայ Եկեղեցու հետ կապուած բոլոր հարցերի լուծման, եւ ինձ թոյլ կուտամ հաստատ յոյս յայտնել, որ յետագայում սահմանուած փոխյարաբերութիւնների հիման վրայ, ՍՍԻ Միութեան Ժողկոմսովետին կից կրօնական պաշտամունքի գործերի Խորհուրդը Հայկական ՍՍԻ Ժողկոմսովետին կից Հայ Եկեղեցու գործերի Խորհրդի հետ միասին ձգտելու է ո՛չ միայն վերացնել Հայ Եկեղեցու ճանապարհին եղած ամէն տեսակ խոչընդոտները, այլև աջակցելու նրա յետագայ կազմակերպական ամրապնդման:

Վերլուծւ թոյլ տուէք մի անգամ ևս Ձեզ բոլորիդ յայտնել յաղոգութեան անկեղծ ցանկութիւններ ժողովի յառաջիկայ աշխատանքներում:



**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՑԻՉ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԻ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ  
ԳՐԹԵՐԻ ԽՈՐՀՐԳԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՊՐԵ. Ս. Ն. ՅՈՎՀԱՆԵՒՍԵԱՆԻ ՃԱՌԸ  
ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ**

*Եկեղեցական ժողովի յարգելի հոգևոր և աշխարհիկ պատգամաւորներ.*

Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի կառավարութեան կողմից լիազօրուած եմ հաղորդելու Ձեզ նրա ողջոյնը և շաւազոյն ցանկութիւնները աբղիւնաւէտ և բեղմնաւոր դարձնելու այն աշխատանքը, որ կոչուած է կատարելու ներկայ Եկեղեցական ժողովը իր օրակարգում դրուած եկեղեցական կարևորագոյն հարցերի լուծման գործում:

Եկեղեցական ներկայ ժողովը գումարուել է կատարելու Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութիւնը, հաստատելու Հայ Եկեղեցու Սահմանադրութիւնը, ինչպէս և լուծելու եկեղեցական ներքին կեանքի մի շարք հարցեր:

Ազգային-Եկեղեցական այս ժողովը գումարուել է պատմական այնպիսի ժամանակաշրջանում, երբ մեր փառապանծ Կարմիր բանակը Դաշնակից Գեառութիւնների զինուած ուժերի հետ միասին վերջնականօրէն ձախլախեց գերմանական Ֆաշիզմը և խոր-

տակեց գերմանական աւազակային իմպերիալիստական տիրապետութիւնը: Յերոպայուս մ ճնշուած ժողովուրդներին պարկեց պատուութիւն և բանգծեց բոլոր ժողովուրդներին համար խաղաղ կեանքի և տնտեսական բարգաւաճման ազատ պայմաններ:

Հայ ժողովուրդը՝ որ Միութեան ժողովուրդների ընտանիքում հնագոյններից մէկն է իր զարուար անցնելով, իր գոյութեան հաղարամեակները ընթացքում ենթարկուել է բազմաթիւ յարձակումների, ճնշումների ու ծանր հալածանքների օտար տիրակալների կողմից:

Հայոց Եկեղեցին փորձութեան այդ ծանր օրերին չի լքել հայ ժողովրդին և Հայոց Եկեղեցին իր բախտը կապել է հայ ժողովրդի հետ) իսկ փոթորիկի ժամին նրա լաւագոյն ներկայացուցիչները անձնուրբար պայքարել են ժողովրդի ազատութեան համար, և իրենց կենսքը զոհարելով Հայրենիքի փրկութեան ու բարօրութեան համար:

Յաղաղ պայմաններում էր բերկիրը շունչ և քաշել արտաքին յարձակումներից, հայոց եկեղեցիներն ու վանքերը քիչ դեր չեն խաղացել մեր հողեր կուրսուրայի զարգացման գործում:

Երբ բռնկուեց համաշխարհային հրդեհը և գերմանական ֆաշիստական հորգումները յարձակուեցին մեր Հայրենիքի վրայ, Սովետական Միութեան ժողովուրդները մի սիրտ և մի հոգի դարձած ծառայեց անարդ թշնամու գէմ և պաշտպանեցին իրենց հայրենի հողը, իրենց ազատութիւնն ու անկախութիւնը՝ Այդ ժամանակ, Հայոց Եկեղեցին անմասն չմնաց Հայրենիքի պաշտպանութեան սրբազան գործից: Ամենայն Հայոց Հայրապետութեան Ազգայնոր Տեղակալ Գեորգ Արքեպիսկոպոսի հայրենասիրական ազդու կտրելը ջերմ արձագանգ գտան հայ հոգեորականութեան և հաւատացեալների սրտերում, այդ կողերը ոգեշնչեցին Սփիւռքի ու մեր երկրի հայ եկեղեցու զաւակներին, որոնք ամենաջերմ սիրով տրամադրեցին իրենց նրկական միջոցները և սաստանցի Գաւթիթ թանգային շարասիւնը կառուցելու:

Սովետական Միութեան Կառավարութիւնը համակրանքով ընդունեց եկեղեցու հայրենասիրական այդ վերաբերմունքը և բարձր գնահատեց Հայոց Եկեղեցու ցոյց տուած բարոյական-նրկական աշակցութիւնը Հայրենական պատերազմի ծանր օրերին:

Հայոց Եկեղեցին մինչև Հոկտեմբերեան Յեղափոխութիւն ազատ չի եղել իր ներքին գործերը տնօրինելու մէջ. նա նոյնիսկ կրել է ծանր հալածանք քարական կառավարութեան կողմից և զուրկ է եղել ազատ ու անկաշխանգ գործունէութեան պայմաններից:

Սովետական իշխանութիւնն ազատագրելով մեր ժողովրդին սարկական պայմաններից, ազատագրեց նաև Հայոց Եկեղեցին նրա վրայ կարծրացած բռնութիւնից և ստեղծեց անկաշխանգ գոյութեան բոլոր պայմանները:

Հայ Եկեղեցու և Կառավարութեան միջև կապը իրականացնելու նպատակով Հայկական Ժողովուրդներին կից ստեղծուած է Հայ Եկեղեցու գործերի Խորհուրդ, որ առանց միջամտելու եկեղեցու ներքին գործերին, աշակցում է եկեղեցու և պետութեան միջև փոխյարաբերութիւնների կարգաւորմանը և հսկում, որ ժամանակին և ճշտօրէն կենսագործունեն Հայ Եկեղեցուն վերաբերող կառավարական օրէնքներն ու որոշումները:

Այս ազատ պայմաններում գումարուած Հայ Եկեղեցական Ժողովը լուծելով օրակարգում գրուած հարցերը, իր որոշումներով անկասկած կը նպաստի Հայ Եկեղեցու ամրապնդման ու նրա բարգաւաճման գործին:

Յարգելի պատգամաւորներ, կրկին անգամ յաջողութիւն իմ ցանկանում Հայ Եկեղեցական Ժողովին իր աշխատանքներն արդիւնաւէտ աւարտելու համար:

